ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/2ՃՀ ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 10.06.2014թ-ին կնքված ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/2ՃՀ պայմանագրում 2014թ. նոյեմբերի 17-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. ՀՀ 2014թ պետական բյուջեով Հ-110, Հ-4–Քանաքեռավան– Հ - 6 (Մրգաշեն-Արտամետ հատված) հիմնանորոգման աշխատանքների համար հատկացվել է 138 000 000 ՀՀ դրամ, սակայն կնքվել է **ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/2ՃՀ** պայմանագիրը ընդհանուր՝ 374 980 984 ՀՀ դրամ գումարով, պայմանով որ մնացած գումարը կհատկացվի հետագայում: ՀՀ կառավարության 11.09.2014թ N1007-Ն որոշմամբ այս տարի հատկացվել է ևս 60 մլն դրամ:
Փոփոխության նկարագրություն:	Սահմանվել է 2014թվականին կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքների ծավալը՝ նոր ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան համաձայն թիվ 1 հավելվածի: Սահմանվել է լրացուցիչ աշխատանքների օրացուցային գրաֆիկ համաձայն թիվ 2 հավելվածի: Հաստատվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը նոր խմբագրությամբ համաձայն թիվ 3 հավելվածի:
Փոփոխության հիմնավորում:	Պայմանագրի 8.6 կետ և ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N 1007-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հասմիկ Օրդուխանյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ hordukhanyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ